

ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԵՎԱ ԺՈՐԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի Թումանյանագիտության իսթի դեկավար*
MnacakanyanEva@mail.ru

ORCID ID: 0000-0002-0508-4050

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-211

«ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼԻ» ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆ ԻԲՐԵՎ ՄԱՐԴՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ՎԵՐԱԾՆՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆ

*Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, «Հազարան բլրով»,
ազգային ու համամարդկային արժեքներ, գեղագիտական իդեալ,
սվիրագործյալ ու անձնագրի հերոս, մարդու կատարելագործման
փիլիսոփայական-գեղագիտական հայեցողություն*

Ներածություն

19-րդ դ. կեսերին եվրոպական բանագիտական մտքի ազդեցությամբ հայ իրականության մեջ մեծ թափ է ստանում ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի գրառման, հրատարակման և ուսումնասիրման գործընթացը, որի սկիզբը դնում է Գ. Սրվանձտյանցը «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874, Պոլիս) գրքով: Այնուհետև սկսվում է բանահավաքչական անսախառեպ մի շարժում, որի պատմամշակութաբանական արժեքը խիստ կարևորում և դրանում իրենց

անուրանալի ավանդն են ներդնում հայ մշակույթի երախտավորներ Մ. Աբեղյանը, Գ. Խալաթյանցը, Ս. Հայկունին, Տ. Նավասարդյանը, Ե. Լալայանը և ուրիշներ. նրանք կորստյան վտանգից փրկում և գիտական հիմքերի վրա են դնում հայ ժողովրդական բանահյուսության գանձերը:

19-րդ դարավերջին հայ ժողովրդի բանավոր մշակույթի նկատմամբ մեծանում է նաև հայ գրողների ուշադրությունը: Պ. Պողոջանը, Ղ. Աղայանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Թումանյանը, Լ. Մանվելյանը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ հետևում են բանահյուսական բազմաբնույթ թեմաներին, յուրացնում ժողովրդական բառ ու բանը, տաղաչափական ձևերը: Վերանշակվում և վերաթևոթվում են բանահյուսական մի շարք ժանրեր՝ ժողովրդական երգը (սիրային, աշխատանքային, ծիսական, մանկական և այլն), առասպելը, վիպական գրույցը, «Մասնա ծոեր» դյուցազներգությունը, հեքիաթը և այլն: Հատկապես բացառիկ տեղ է գրավում հեքիաթի ժանրը, որի նկատմամբ հետաքրքրության աննախադեպությունը, գրառումների մեծ թափը, գրական մշակման փորձերը գերազանցում էին մյուս ժանրերին:

Հեքիաթը ներկայացնում է մարդկանց ազատ ստեղծագործության, վառ երևակայության, լեզվամտածողության, հոգեբանության բազմապիսի դրսևորումներ: Յուրաքանչյուր մշակույթում հեքիաթները հանդես են գալիս որպես տվյալ ժողովրդի արժեքային համակարգի ամբողջություն, կենսահայեցողյան, վարքի նորմերի և գործառույթների ուղեցույց, որոնք մատնանշում են այս կամ այն խնդրի լուծման ուղիները: Հեքիաթների հերոսների արարքները պայմանավորված են տվյալ հասարակության մեջ ձևավորված և գործող հոգևոր, բարոյական, նյութական արժեքներով և աշխարհընկալմամբ: Սակայն մարդկային հասարակության ձևավորման, վաղ մանկության զար-

գացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դարերի ճանապարհ անցած հնագույն ազգերին բնորոշ են հատկանիշներ, հոգեբանական դրսևորումներ, որոնք, ազգային շունչ և նկարագիր ունենալով հանդերձ, խիստ համամարդկային են: Պատահական չէ, որ աշխարհի ժողովուրդների հեքիաթները քննելիս հանդիպում ենք նման կամ ծանոթ պյուժեների, կերպարների, իսկ ամենակարևորը՝ գաղափարների, որոնք, չնայած մասնակի տարբերություններին, ունեն ընդգծված աղերսներ: Թափառական պյուժեների ուժը հենց այն է, որ բանահյուսական ծնունդ լինելով՝ հեշտ համակերպվում են տարբեր ազգերի մտածողությանն ու կենսահայեցությանը:

«Հագարան բլուր» հեքիաթի նյութը տարատեսակ տարբերակներով¹ շրջանառվել ու պատմվել է բազմաթիվ հնագույն ժողովուրդների բանահյուսությունների մեջ: Հրաշք թռչունի կերպարը, նրա որոնումների հետ կապված տարբեր արգելքների ու խոչընդոտների կախարդական պատմությունները արտացոլում են իրականության հարուցած դժվարությունների հաղթահարման և մարդկության նվիրական իդեալների իրագործման ազգային պատկերացումները: Հրաշագործությամբ ձեռք բերված թռչունը իրականություն է դարձնում մարդկային երազանքները, ուրվագծում է առհասարակ մարդկային հասարակության իդեալական պատկերը, դեպի որը ձգտում, բայց չի կարողանում հասնել ամբողջ մարդկությունը:

¹ Հեքիաթագետ Թամար Հայրապետյանի կարծիքով «Հագարան բլուրի» տարբերակների «ժամառոտ վերլուծությունը հանգում է մարդկությանը մշտապես հուզող օտար, անծանոթ աշխարհների մշակութային յուրացման խնդրին» (Արքե-տիկային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 235): Այլ խոսքով՝ հերոսի համարձակությունը, չնայած նախնական արգելքին, բխում է մարդու բնական պահանջմունքներից: Երեք ճանապարհների խաչմերուկում փոքր տղան, զուրկ չլինելով ընտրության հնարավորությունից, այնուամենայնիվ, նախընտրում է դժվարին ճամփան և հաղթահարելով անհնարին թվացող արգելքները՝ հասնում է նպատակին:

«Հազարան Բլբուլ» հեքիաթի սյուժեն տարածված է եղել մի շարք տարբերակներով և մշակվել է բազմաթիվ ստեղծագործողների կողմից (Պյոտր Երշով «Սապատավոր ձին»², Նիկոլայ Յագիկով «Հրեղեն թռչուն»³, Վասիլի Ժուկովսկի «Թագավորազն Իվանի և գորշ Գայլի մասին»⁴, Մորիս Մետերլինկ «Կապույտ թռչուն»⁵, Ղազարոս Աղայան «Հազարան բլբուլ»⁶ Հովհաննես Թումանյան «Հազարան բլբուլ»⁷ և ուրիշներ), ունեցել է թե՛ ընդհանուր, թե՛ տարբեր մեկնաբանություններ:

Ժողովուրդների բանավեպերի փոխառնությունների մասին Հովհ. Թումանյանը գրում է. «Ինչպես էս կամ էն դարձվածքը, էնպես էլ ամբողջ պատմությունները անց են կենում աշխարհից աշխարհ, և ամեն աշխարհքում, ամեն արևի տակ, ամեն ժողովրդի բերանում առնում են մի ուրույն երանգ, համ ու հոտ: Եվ շատ անգամ նուրբ առանձնահատկություններն են, որ որոշում են մի ժողովրդի ստեղծագործությունը մյուսից, ոչ թե գործի ամբողջությունը: Հաճախ կիսաթափվեն էս մարդիկ, որոնք ուզում են էս կամ էն ժողովրդական ստեղծագործությունը էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց հայրենիքի ու պապերի հետ»⁸:

Հայկական հեքիաթներում հազարան բլբուլը⁹ կոչվել է «սինամ հավք», «գմրուխտ դուշ», «դուշ-փարի», «գաղի հավք»,

² Տե՛ս <https://www.litres.ru/book/petr-ershov/konek-gorbunok-332532/chitat-onlayn/>

³ Տե՛ս https://www.yazikov.org/text/poem_bird2.shtml

⁴ Հեքիաթ Իվան արքայազնի և գորշ գայլի մասին, Երևան, Հայպետհրատ, 1958, 44 էջ: Ռուս. փոխադրեց՝ Հ. Հայրյան:

⁵ Մետերլինկ Մ., Թատերգություններ, Երևան, 1997:

⁶ <https://katalog.am/grakanutyun/show-htm-itemid-45.html>

⁷ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 424:

⁸ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 217–218:

⁹ «Они выступают как особые мифопоэтические классификаторы и символы божественной сущности, верха, неба, духа неба, солнца, грома, ветра, облака,

«հազարաբիլբուլ», «այլուայլու»: Ընդհանուր առմամբ հազարան բլբուլը խորհրդանշել է բնության վերածննդի, գեղեցկության, արդարության ու ներդաշնակության:

Նրա որոնման պատումը քննություն է փիլիսոփայական համապարփակ մի համակարգի, որ փորձում է վերափոխել կյանքը՝ ըստ ամենավեհ և մարդասիրական իդեալների:

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացվում են Հ. Թումանյանի «Հազարան բլբուլ» ստեղծագործության տարաժանր դրսևորումների կառուցվածքային, գաղափարական առանձնահատկությունները, գրական մշակման ազգամշակութային ու վերազգային երանգները:

Հ. Թումանյանի հեքիաթն իբրև փիլիսոփայական նոր աշխարհայեցության դրսևորում

Ժողովրդական բանահյուսությունը մշտապես եղել է ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ստեղծագործական հետաքրքրությունների կիզակետում: Բացառիկ արժեք վերապահելով բանահյուսությանը ընդհանուր աշխարհաճանաչման և բուն ազգաճանաչման տեսակետից, բանահյուսությունը դիտելով որպես ժողովուրդների ազգային մտածողության, հոգեկերտվածքի, ուրույն աշխարհատեսության վավերական վկայագիր՝ իր ստեղծագործական որոնումների ճանապարհին հաճախ կանգ է առել բանահյուսական գայթակղիչ հանգրվաններում՝ պատկերներ, կերպարներ, պոեմներ յուրացնելով դրանից: Դարերով հղկված հեքիաթների պոեմների,

свободы, роста, жизни, плодородия, изобилия, подъёма, восхождения, вдохновения, пророчества, предсказания, связи между космическими зонами, души, дитяти, духа жизни и т. п.» («Мифы народов мира», т. II, Москва. «Советская Энциклопедия», электронное издание, 2008, էջ 837). https://www.indostan.ru/biblioteka/knigi/2730/3412_1_o.pdf

կերպարների մեջ բանաստեղծը տեսնում է համապարփակ ու խորագույն ընդհանրացումներ, «հավիտենական սիմվոլներ»¹⁰:

«Հազարան բլբուլը»¹¹ Հովհաննես Թումանյանի վաղ սկսած և չավարտած, ամենածավալուն և բազմաշերտ երկերից մեկն է: Նպատակ ունենալով ստեղծելու արևելյան պոեմ՝ նա մանրակրկիտ ուսումնասիրել, հավաքել, երբեմն էլ անձամբ գրի է առել ժողովրդական հեքիաթի 58 տարբերակ (հայկական, ռուսական, գերմանական, վրացական, արաբական, ասորական, չեչենական, մենգրելական, իմերեթական, ադիգեյական և այլն), գուգադրել է միմյանց հիմնական սյուժեները, ուսումնասիրել է դրանց առնչվող աշխարհագրական, ազգագրական, լեզվաբանական հարցեր, ստուգաբանել է հերոսների անունները և այլն: Թումանյանը տարբերակները լայն առումով բաժանել է երկու խմբի՝ *արևելյան* և *արևմտյան*:

Բազմազան տարբերակներից Թումանյանը նախընտրում է արևելյան ու հայկական մի քանիսը: Հատկապես արևելյանը նրան ավելի հոգեհարազատ էր և՛ ձևի, և՛ բովանդակության տեսանկյունից: Ինչպես նշում է բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը, 1919 թվականին՝ մի գրույցի ժամանակ, Թումանյանն ասել է. «Բայց շա՛տ հոյակապ, շքեղ ու գեղեցիկ բան է մեր «Հազարան բլբուլը»: Եվ եթե մեր «Հազարան բլբուլը» համեմատենք արևմտյան «Կապույտ թռչունի» հետ, հսկայական տար-

¹⁰ Թումանյան Հ., *Երկերի լիակատար ժողովածու*, հատոր 10, էջ 424:

¹¹ Հայ ժողովրդական բանահյուսության մեջ տարածված «Հազարան բլբուլ» հեքիաթը, որը, ըստ Աարեն-Թոմփսոն-Ութերի հեքիաթների միջազգային համագույցի, համապատասխանում է ATU 550 թվացանկին, ունի Հայաստանի պատմաաշխարհագրական տարբեր շրջաններից գրառած և տպագրած 10 տարբերակ: Տե՛ս **Հայրապետյան Թ.**, «Հայ ժողովրդական հեքիաթների թումանյանական մշակման միջազգային գուգահեռները», «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 6, 2018–2019, էջ 68: Տե՛ս **Uther H.J.**, The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, pp. 318–320:

բերություն կա: Արևելյանը խոշոր առավելություն ունի՝ սանձարձակ ֆանտազիա՝, էկզոտիկ բնավորություն, խորություն, նրբություն, շատ քչերն ունեն էս տեսակ բան: Կատարյալ հեքիաթ է: Միայն հունական միֆոլոգիան, թերևս ունի էս հարստությունը»¹²:

Նպատակ ունենալով ստեղծելու արևելյան մի պոեմ՝ Թումանյանը տարբեր պատճառներով թերավարտ է թողնում գրական մշակումը՝ երեք տարածանք գործեր, որոնք, սակայն, հայ գրականության եզակի գոհարներից են, և որոնց մեջ Թումանյանն իր բառերով «հանդգնություն» է ունենում հակառակվելու գիտնականների այն կարծիքին, թե հեքիաթի առարկան գարնան գալն է: Ավելին, Թումանյանին հայտնի էր, որ «Հազարան բլբուլի» պոեմն մշակվել է բազմաթիվ ստեղծագործողների կողմից և ունեցել է տարբեր մեկնաբանություններ, սակայն միանգամայն համոզված էր, որ ինքը բերելու է բոլորովին նոր, ինքնուրույն խոսք:

Ժամանակի ընթացքում բանաստեղծի առաջադրույթը ևս կրում է որոշակի փոփոխություններ՝ ներառելով խորահայաց քննությամբ հայտնաբերված գաղափարական նուրբ ենթաշերտեր, փիլիսոփայական նոր աշխարհայեցողություն: Այսպես, 1899 թվականին Փ. Վարդազարյանին ուղղված նամակում գրում է. «...Մինչև անգամ, հանդգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքիաթի մեջ և այն զարգացնել ու երգել: Ինչպես դու գիտես – իմ կարծիքով բանաստեղծության ու մուզիկայի ծնունդն է հեքիաթի առարկան»¹³:

Եթե այս նամակում Հազարան բլբուլի երգը Թումանյանը կապում է պոեզիայի և երաժշտության ծնվելու հետ, ապա 1912

¹² Թումանյան Ն., *Հուշեր և գրույցներ*, Երևան, «Լույս» հրատ., 1987, էջ 206:

¹³ Թումանյան Հ., *Երկերի լիակատար ժողովածու*, հատոր 9, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 238:

թվին արդեն ավելի մեծ խորհուրդ է հաղորդում հեքիաթին: Հայոց երաժշտական ընկերության բացման խոսքում բանաստեղծն ասում է. «Պատահեց, ասում է հին գրույցը, որ մի ժամանակ գազան դարձավ քնքուշ ու բանական մարդը: Ինչ արին-չարին՝ հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգ-երաժշտությունն է ... Թող բացվի վարագույրը, թող հնչի նրա աստվածային ձայնը, և գազանը մարդ կդառնա»¹⁴:

Ասվածից ենթադրվում է, որ հեքիաթի գաղափարը նա տեսնում է արվեստի, մասնավորապես, երաժշտության բացառիկ ուժի միջոցով մարդուն բարոյապես ու գեղագիտորեն բարձրացնելու, մարդկային էությունից կենդանական բնագոյները, մանր կրքերն ու արատները վանելու մեջ:

1910-ական թվականներին՝ հայ ժողովրդի համար ծանր տարիներին՝ Առաջին համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Հազարան բլրովի այգին բանաստեղծի համար դառնում է հոգու ապաստան: Հեքիաթի գեղարվեստական մշակման վերջին փորձը նա անում է 1914 թվականին, երբ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, և բանաստեղծը հույս ուներ, որ այն կավարտվի Գերմանիայի պարտությամբ: «Սրանից հետո թերևս գան խաղաղության օրեր ու իմ ծաղկանոցի ուտոպիան էլ իրականանա»¹⁵, - գրում է նա:

Թումանյանի բարձր ձգտումը բանաձևվում էր այն գաղափարով, թե «ժողովրդի հարատևության հիմքը ոգին է, և նրա կրողը մշակույթն է, հետևաբար՝ ձգտումը պետք է լինի դառնալու «ինքնուրույն կուլտուրայով մի ամբողջական ազգ»¹⁶:

¹⁴ **Թումանյան Հ.,** *Երկերի լիակատար ժողովածու*, հատր. 10, էջ 165–166:

¹⁵ Նույն տեղում, էջ 208:

¹⁶ **Mnatsaknayan Y.,** *Literature Review of Spiritual-Cultural Environment of the Late 19th and Early 20th Centuries*, Wisdom 3(19), 2021, p. 40.

Կյանքի վերջին օրերին արդեն անբուժելի հիվանդ բանաստեղծի համար Հազարան բլրույը դառնում է իր անավարտ գործերի և ծրագրերի խորհրդանիշը. «Կյանքս էլ «Հազարան բլրույ» է դառնալու ... չի գրվելու, չի լինելու ... Ամենալավ բաները հավաքեցի, ամենալավ ճանապարհները ընտրեցի և ամենալայն ծրագրերը կազմեցի, և ոչինչ չեղավ, ոչինչ ... Բոլոր ծրագրերս խորտակվեցին, հոգիս տակն ու վրա եղավ, խանգարվեց»¹⁷:

Թումանյանի գրական մշակման քննությունը՝ որպես հայ ժողովրդի կենսափոխության ու աշխարհընկալման բացահայտում

Հ. Թումանյանը բանահյուսական նյութերը հավաքելիս, ուսումնասիրելիս, ապա մշակելիս առաջնորդվում է գաղափարական հստակ դիրքորոշմամբ և սեփական ըմբռնումները արտահայտելու սկզբունքայնությամբ:

«Հազարան բլրույ» հեքիաթի թե՛ արևմտյան, թե՛ արևելյան տարբերակներում որևէ ակնարկ չկա մարդու գազան դառնալու և թռչունի երգի զորությամբ նորից մարդանալու մասին: Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդու՝ գազանի կերպափոխվելու և հրաշք թռչունի երգի շնորհիվ վերածնվելու մոտիվը առկա է բանաստեղծի գրի առած տարբերակներից միայն մեկում՝ վերնագրված «Հազարան բլրույ», որի տողատակում կա հետևյալ ծանոթագրությունը. «Հազարաձայն սոխակը այլաբանություն է, բանաստեղծություն»: Այլ խոսքով՝ այն խորհրդանշում է պոեզիան:

Թումանյանը բացառիկ վարպետությամբ մոտ 60 պատումների ու գրավոր աղբյուրների միջից հետևողականորեն առանձնացրել է իրեն հետաքրքրող մոտիվը: Դարձնելով իր

¹⁷ Թումանյան Ն., *Հուշեր և գրույցներ*, էջ 145:

ստեղծագործության գաղափարական կենտրոնը՝ նա զարգացրել է այն համապատասխան ընթացքով՝ շրջանցելով մի շարք դրվագներ ու մանրամասներ՝ որոնք առկա են «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի «Фаризада розовая улыбка» հեքիաթում և Ղազարոս Աղայանի թարգմանության մեջ: Հեղինակը ձեռագիր աղբյուրներում հիշատակում է դրանք, սակայն շրջանցում է սյուժետային որոշ պատումներ՝ թագավորի ամուսնությունը, քույրերի խարդախությունը, մոր ու երեխաների ճակատագրական բաժանումը և այլն՝ ստեղծելով տարբեր ժանրերի երեք գործեր՝ պոեմ, երգախառն արձակ հեքիաթ և երեք տեսիլից բաղկացած դրամատիկական մի քանի էջ:

«Նույն նյութի այս երեք տարբեր մշակումների փաստը հազվադեպ մի բան է Թումանյանի ստեղծագործական կենսագրության մեջ և նույնպես խոսում է «Հազարան բլբուլի» նկատմամբ տաժած հատուկ հետաքրքրության մասին»¹⁸, գրում է Էդ. Ջրբաշյանը: Եռաձև, սակայն անավարտ մնացած երկերի միջոցով Թումանյանը փորձում է բացահայտել սեփական աշխարհայեցողության ու գեղարվեստի արժեքայնության հանրագումարային բանաձևը:

Թումանյանական բազմաշերտ պատումից առանձնացրել ենք մի քանի հիմնահարցեր, որոնք ձևավորվում են դիպաշարի զարգացման ընթացքում.

1. Ո՞րն է դեպի անհայտ աշխարհ գնալու և կախարդական թռչունը գտնելու դրդապատճառը:

2. Ո՞վ պետք է ստանձնի Հազարան բլբուլը գտնելու առաքելությունը:

3. Ո՞վ է ճամփաբաժանի խորհրդավոր ծերունին:

¹⁸ **Ջրբաշյան Էդ.,** *Թումանյանի պոեմները*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986, էջ 389:

4. Ինչպե՞ս են արձագանքում եղբայրները ծերունու զգուշացումներին:

5. Ինչպե՞ս են հաղթահարվում փորձությունները:

6. Ինչպե՞ս է ավարտվում պատումը:

«Հազարան բլբուլի» գաղափարական հոսքերը, գեղագիտական իդեալի և իրականության թունանյանական պատկերացումները ծնունդ են տալիս գեղարվեստական երեք կոմպոզիցիաների: Արձակ և չափածո շարադրանքով, այլաբանական պատկերներով, խորիմաստ երկխոսություններով, փիլիսոփայական ենթաշերտերով հյուսվում են պոեմի, երգախառն հեքիաթի, դրամայի պյուժեները, տեղ-տեղ կրկնվում են, որոշ դեպքերում ներառում նոր պատմություններ («Արեգը սև աշխարհքում», «Երգչի վիշտը»):

Ալամ արքայի (Ալամ նշանակում է Աշխարհ) այգին խորհրդանշում է ողջ աշխարհը և առաջին տողերը հիշեցնում են դրախտը, Արարչագործությունը՝

Երբ դեռ շունչը արարչական ծավալվում էր օդի մեջ...

Եվ տիրում էր ամենուրեք սերն ու հանգիստն անվրդով,

Եվ գառն ու գել դեռ միամիտ խաղում էին իրար քով:

Բայց երբ հնչում է Հուրան քաղաքում ապրող պառավ կնոջ անեծքը, փուշ ու տատասկի է փոխվում Ալամ թագավորի դրախտանման այգին, որն այլաբանորեն մատնանշում է բնության ու կյանքի գեղեցկությունները աղարտող մարդկային արատներն ու մեղքերը: Առավել խորիմաստ խորհրդանիշ է այգեպանների՝ զազանի կերպարանք ստանալու իրակությունը: Իմաստունների պնդմամբ ստեղծված իրավիճակը կարող է փոխել միայն Հազարան բլբուլը: Թռչունի որոնման համար ճանապարհվում են թագավորի երեք որդիները, որոնցից նպատակին

հասնում է կրտսերը. վերջինիս սկզբում արգելում են. 'նա'¹⁹ տա-
րիքով փոքր էր, «ջահել, երազուն» մի պատանի՝ երաժշտությո-
ւամբ, աստղերով ապրող:

Չնայած ավագ եղբայրները 'նրան որոշակի քամահրան-
քով են վերաբերվում, սակայն Արեգի համար առաջնային է
դառնում աշխարհը վերափոխելու, չորացած այգին 'նորից ծաղ-
կեցնելու, գազան-մարդուն մարդկային կերպարանքը վերա-
դարձնելու ձգտումը: Իսկ դա հնարավոր է միայն Հազարան
բլրույի օգնությամբ. 'նրա երգը փուշ ու տատասկը կդարձնի
վարդ, գազանին էլ՝ մարդ: «Արարչագործական առաջին
դրվագն է, որ համամարդկային հնչեղություն է հաղորդում հե-
քիաթի թումանյանական մշակմանը, որ հավքը պետք է ոչ թե
ծեր թագավորին բուժելու²⁰, այլ 'նրա երաժշտությամբ աշխարհը
սկզբնատիպ վիճակին վերադարձնելու համար», - գրում է գրա-
կանագետ Վարդան Դևրիկյանը²¹:

Հեքիաթի հաջորդ խորհրդանշական կերպարը խորհրդա-
վոր ծերունին է: Համաշխարհային մշակութաբանության մեջ
առանձնանում են կերպարներ, որոնք առկա են բազմաթիվ ժո-
ղովուրդների գրականությունների մեջ: Շվեյցարացի հոգեվեր-
լուծաբան Կ. Գ. Յունգը այդ տիպերն անվանում է արքետիպեր,
որոնք «պատկերների որոշակի ձևով»²² են ստեղծվել: Կոլեկ-
տիվ անգիտակցության համընդհանրականություն ունեցող այդ

¹⁹ Թումանյանը տարբեր դրվագներում թագավորի կրտսեր որդուն տարբեր
է կոչում՝ Արեգ և Շնորհք:

²⁰ Ժողովրդական հեքիաթի տարբերակներում դրոպապատճառները տար-
բեր են, օրինակ՝ ծեր թագավորի տեսողությունը կամ ամողջությունը կվերականգ-
նվի, եթե Հազարան բլրույը երգի: Մեկ այլ տեղ Հազարան բլրույը պահանջվում է
թագավորի նոր կառուցած եկեղեցու կամ ապարանքի ամբողջացման համար:

²¹ **Դևրիկյան Վ.**, *Հազարան բլրույի Թումանյանի մշակումը հեքիաթի տարբե-
րակների համատեքստում*, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 6,
Երևան, 2018-2019, էջ 194:

²² **Юнг К.**, *Об отношении аналитической психологии к поэтико-удожест-
венному творчеству* // Зарубежная эстетика и теория литературы XIX–XX вв.
Трактаты, статьи, эссе, М., 1987, էջ 229.

պատկերները վերժամանակյա են և կրկնվում են ամենատարբեր ժողովուրդների դիցաբանություններում, գեղարվեստական երկերում, հեքիաթներում: Ծերունին արարչական իմաստությամբ խտացնում է մարդկության անցած ճանապարհի փորձառությունը և պատրաստ է օգնելու բոլոր նրանց, ովքեր հայացք կուղղեն իրեն: Նա հայտնվում է այն պահին, երբ հերոսները անելանելի վիճակում են և խորհրդի կարիք ունեն:

Թումանյանական մշակումներում ճամփաբաժանի ծերունին կանգնած է վերևում՝ գլուխն ամպերի մեջ, տարածության ու ժամանակի երկաշխարհային խաչողում՝ պատրաստ իրեն դիմող մարդկանց ցույց տալու ճանապարհը: Այլամ թագավորի երեք որդիներից միայն Արեգն է հայացքը երկինք հառում: Նրան մի բան է հետաքրքրում. «Ո՞րն է ճամփան, որ տանում է էն աշխարհը երջանիկ, Ուր Հազարան ազնիվ հավքն երգ է ասում կենդանի...»²³:

Ծավալվող երկխոսության մեջ Ամենատես ծերունին, որ իր իսկ բնորոշմամբ «Սկիզբն ու վերջն» է, զգուշացնում է տղային՝ ճանապարհը կարող է անդարձ լինել: Ավելին, խորհուրդ է տալիս վերադառնալ ու ապրել շատերի պես գոհ, որ չեն հոգում, թե «կորցրել է մարդն իր պատկերն անարատ»²⁴: Սակայն Արեգն անդդվելի է: Ծերունին, որ հետևում է աշխարհի գոյաբանական ինքնագիտակցության տարափոխիկ դրսևորումներին, ըմբռնում է, որ իր առջև աստվածային շնորհք ունեցող մեկն է՝ բարձրին ձգտող, անլսելին լսող, անտեսանելին տեսնող, անկարելին տենչացող, օրհնում է նրա ճանապարհը.

Անձնուրաց հոգի, որ քաջ ու անվախ

Ընտրում ես – ընկնում այս անդարձ ճամփան,

Որ հոժար սրտով քո կյանքը մատաղ

²³ Թումանյան Հ., *Երկերի լիակատար ժողովածու՝ 10 հատորով (վերախմբագրված հրատարակություն)*, հատոր 4, Երևան, «Անտարես» հրատ., 2020, էջ 115:

²⁴ Նույն տեղում, էջ 145:

Ուխտել ես գազան մարդի փրկության
[Ծերիս] օրհնանք էլ թող լինի քեզ հետ...²⁵:

Այնուհետև հերոսը քայլում է դեպի վտանգներով ու ար-
հավիրքներով լի կախարդական աշխարհը: Արեգը հաղթահա-
րում է մի շարք դժվարություններ. անցնում է Սև, Կարմիր, Սպի-
տակ աշխարհներով, կովում Սև դևի, Երկաթե բազուկի և Վի-
շապի դեմ, հաղթում նրանց, փրկում արքայադուստրերին և
մարդկանց ազատում գերությունից: Արդյունքում լույս է բաց-
վում աշխարհների վրա: Այնուհետև հայտնվում է Մշտադալար
այգում, հրաժարվում հուրի-փերիների առաջարկած ուրախ ու
երջանիկ, անհոգ կյանքից: Շնորհքի բուն նպատակը մեկն է.

Փուշը վարդ փոխեմ թովչական երգով,
Արջերը մարդիկ բանական հոգով²⁶:

Շարունակվում են փորձությունները. կապուտակ ծովից
ելած հրեղեն ձիու օգնությամբ հասնում է Հազարան բլրույի տե-
րության սահմանին, անցնում լեղի գետով, տատասկոտ դաշ-
տով, դիմանում է խեղկատակների խաղերին, ծաղրին ու հայ-
հոյանքներին ու չի արձագանքում: Ի վերջո, Հազարան բլրույը
ձեռքին, վերադառնում է հոր թագավորության սահմանին:

Հայկական ժողովրդական տարբերակներում Հազարան
բլրույի որոնումների պյոժեն, համաձայն հեքիաթի ժանրին ու
պոետիկային, ավարտվում է հաջողությամբ, առաջադիր նպա-
տակի իրականացմամբ: «Հազարան բլրույի» թումանյանական
երեք տարաժանր մշակումները, սակայն, ինչպես նկատել ենք,
մնում են անավարտ (հեղինակի ողջության օրոք ամբողջովին
մշակվել ու տպագրվել է միայն երկու հատված՝ «Երգչի վիշտը»,
«Արեգը սև աշխարհքում»): Թումանյանը պոետը կիսատ է թող-
նում այն մասում, որտեղ հերոսը հասնում է Հազարան բլրույին:
Անավարտ է մնում նաև հեքիաթի արձակ երգախառն տարբե-

²⁵ Նույն տեղում, էջ 118:

²⁶ Նույն տեղում, էջ 161:

րակը, որը, առավել ծավալուն լինելով, թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմելու պոեմի հնարավոր ավարտի վերաբերյալ: Արձակ տարբերակում Արեգը կանգ չի առնում իր ճանապարհին, մերժում է հրաշք փերիների՝ իրենց մոտ մնալու առաջարկը՝ շարունակ պնդելով. «Ես նպատակ ունեմ, պետք է գնամ իմ նպատակի ետևից: Պետք է գտնեմ Հազարան բլրովը, որ փուշը նորից վարդ դարձնեմ, գազանը՝ մարդ²⁷»: Մի պահ տրվելով գեղեցկուհի թագուհու հմայքին՝ համբուրում է նրան, բայց արագ սթափվելով՝ շարունակում իր առաքելությունը:

Դրամայի վերածված անավարտ տարբերակն ունի հետևյալ դրվագները՝ Այգու հիմնումը, ծարավ մնացած անցորդի անեծքով այգու չորանալը, ծերունի գիտունների հավաքվելը թագավորի մոտ և Համբարձման գիշերվա տեսարանը: Այստեղ բանաստեղծին առաջնահերթ հուզում է ոչ թե այգու չորանալը, այլ մարդու գազանային բնույթի հարցը: Հավաքված գիտուններին թագավորն ասում է. «Էլ չեն կարողանում գլուխները վեր բարձրացնել ու մարդու վսեմ հայացքով նայել երկնքին»²⁸: Պատասխան խոսքը ընդգծում է բանաձևային միտքը. «Էդ մարդիկ չեն, տեր արքա, մարդն էդպես չի եղել, էդպես չի՛ և էդպես չի լինելու: Էդ գազանն է – ինչ կերպարանքով ուզում է լինի»²⁹:

Զրույցից անմիջապես անցում է կատարվում Համբարձման գիշերվա տեսարանին, որը չկա ո՛չ ժողովրդական որևէ տարբերակում և ո՛չ էլ Թումանյանի չափածո և արձակ մշակումների մեջ: «Երաժշտությամբ աշխարհը վերափոխելու ըմբռնումը,- նկատում է Վ. Դևրիկյանը,- Թումանյանը, թերևս զուգակցել է Համբարձման գիշերվա կախարդական և խորհրդավոր այն պահի հետ, որը նկարագրված է «Անուշի» մեջ, ուր այն լիովին համահունչ է ժողովրդական տարերքի հետ: «Հազարան

²⁷ Նույն տեղում, էջ 160:

²⁸ Նույն տեղում, էջ 165:

²⁹ Նույն տեղում, էջ 166:

բլբուլի» դրամատիկական տարբերակում անհամեմատ գրականացված և եկեղեցականորեն ծիսականացված է հրաշալի այն վայրկյանը, երբ կանգ է առնում ջրերի ընթացքը և ծաղիկները սկսում են խոսել իրար հետ: Այն արդեն ներկայացված է Հայոց եկեղեցու Երեքսրբյանի՝ «Սուրբ ես Տէր, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց»³⁰:

Այսպիսով, Թումանյանը բոլոր երեք ժանրերն էլ թողնում է անավարտ. թե՛ չափածո և թե՛ արձակ տարբերակներն ավարտվում են այն կետում, երբ հերոսը հասնում է Հազարան բլբուլին. այնուհետև կախարդական հավքի երգով պետք է վերականգնվեր աշխարհի ներդաշնակությունը, մարդը վերադառնար իր նախաստեղծ կերպին:

Հով. Թումանյանի կյանքին ու ստեղծագործական ընթացքին հետևելով՝ կարող ենք պնդել՝ բանաստեղծը ոչ թե չի հասցրել ավարտել «Հազարան բլբուլի» արձակ և չափածո տարբերակները, այլ չի տեսել հավանական և ակնկալելի ավարտը: Ժամանակի առջև ծառացած աշխարհաքաղաքական անագնիվ գործընթացները, Հայկական հարցի ու հայության ողբերգական ալեկոծումները, ազգային-հոգեբանական, անձնական բազմաբնույթ խնդիրները անհնարին էին դարձնում բանաստեղծի պատկերացրած ներդաշնակ ու խաղաղ այն աշխարհը, որ պետք է հաստատվեր Հազարան բլբուլի երգով: Հայ ժողովրդին պատուհասած և դեռ շարունակվող հարվածները չեն թողնում, որ հեքիաթը հեքիաթային ավարտ ունենա:

Եզրակացություններ

«Հազարան բլբուլի» թումանյանական տարածանք մշակումների ուսումնասիրությունից եզրակացրել ենք, որ դրանցում

³⁰ **Դևրիկյան Վ.**, *Հազարան բլբուլի Թումանյանի մշակումը հեքիաթի տարբերակների համատեքստում*, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 6, էջ 198:

առկա են կայուն բանաձևեր, որոնք սովորեցնում են քաջություն, բարություն, հավատարմություն, անձնագոհություն: Գործողությունների շղթայում ճամփաբաժանին հայտնված հերոսները մշտապես ունենում են ընտրության հնարավորություն, և, որպես կանոն, հատկապես գաղափարակիրը ընտրում է դժվարին ուղին, որը նրան տանում է դեպի երազանքների իրագործում: Առանձին արքետիպային կերպար է նույն ճամփաբաժանին հանդիպող խորհրդավոր ծերունին, որը արարչական իմաստությամբ խտացնում է մարդկության ճանապարհի անցած փորձառնությունը, և դրանից օգտվողն ի վերջո հաղթող է դուրս գալիս:

Նվիրագործյալ ու անձնագոհ հերոսին է վիճակվում ցանկությունը դարձնել իրողություն, հնարավորությունը՝ իրականություն, հաղթահարել անհաղթահարելին, երևույթներին ու գործողություններին տրամաբանական ընթացք տալ՝ նպաստելով տիեզերական արդարության ու սիրո վերագտնումին: Հերոսի սխրագործությունների վերջնարդյունքը արարչագործ թոչունի միջոցով այգին (աշխարհը) իր նախաստեղծ վիճակին վերադարձնելն էր: Երգող թոչունը երաժշտության ու պոեզիայի սիմվոլն է, որի հրաշագործ ուժի ազդեցությամբ աշխարհը կարող է հասնել կատարյալ ներդաշնակության:

«Հազարան բլբուլը» Թումանյանը մեկնում է իբրև մարդու կատարելագործման ու վերածնման փիլիսոփայական-գեղագիտական հայեցողություն: Հարազատ մտալով բանահյուսական աղբյուրին՝ Թումանյանը նոր խորությամբ ու բովանդակային կենսահայեցողությամբ է վերակերտում այն:

ЕВА МНАЦАКАНЯН

*Доктор филологических наук, доцент
руководитель Туманяноведческой группы
института литературы НАН РА*

ТУМАНЯНОВСКАЯ ОБРАБОТКА «АЗАРАН БЛБУЛ» КАК ФИЛОСОФСКО-ЭСТЕТИЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ СОВЕРШЕНСТВОВАНИЯ И ВОЗРОЖДЕНИЯ ЧЕЛОВЕКА

Резюме

В настоящем исследовании представлены структурно-идейные особенности разножанровых проявлений в произведении Туманяна «Азаран Блбул», национально-культурные и наднациональные нюансы литературной обработки. Материал «Азаран Блбул» в разных вариантах существовал и пересказывался в фольклоре многих древнейших народов. Образ чудо-птицы, волшебные истории о разных препятствиях, связанных с ее поисками, отражают национальные представления о преодолении возникающих в реальности трудностей и воплощении в жизнь заветных идеалов человечества.

Цель исследования – показать на примере туманяновской обработки ведущую национальную и общечеловеческую идею, раскрытую поэтом в сказках об «Азаран Блбул», распространение которой может иметь общественное и эстетическое значение.

Задачами исследования являются:

- а. изучить аналогичные эпизоды в первоисточниках,
- б. представить интерпретацию по-новому осмысленных словес обработанного Ованесом Туманяном фольклорного материала, а также высоких гуманистических идей, выделив содержащиеся в них ключевые послылы.

Исследование проводилось с использованием аналитических, сравнительных, литературоведческих, психологических и философских методов.

Ключевые слова: Ованес Туманян, «Азаран блбул», национальные и общечеловеческие ценности, эстетический идеал, самоотверженный и жертвенный герой, философско-эстетический взгляд на человеческое совершенство

YEVA MNATSAKANYAN

Doctor of Philological Sciences, Associate Professor.

the Head of the Tumanyan Studies Group of the

Institute of Literature of the RA NAS

TUMANYAN'S ADAPTATION OF "HAZARAN BLBUL" AS A PHILOSOPHICAL AND AESTHETIC CONCEPT OF PERFECTION AND REVIVAL OF HUMAN

Abstract

The present study presents the structural and ideological features of multi-genre manifestations in Tumanyan's work "Hazaran Blbul", the national-cultural and supranational nuances of its literary adaptation. The material of "Hazaran Blbul" in different versions has existed and has been retold in the folklore of many ancient peoples. The image of the miracle-bird and the magical stories about various obstacles associated with its search reflect the national ideas about overcoming difficulties arising in reality and the embodiment of the cherished ideals of humanity.

The purpose of the study is to show, on the example of Tumanyan's adaptation, the leading national and universal ideas

revealed by the poet in the tales about “Hazaran Blbul”, whose spreading can have a public and aesthetic significance.

The objectives of the study are the following:

- a. to study similar episodes in primary sources,
- b. to present the interpretation of newly comprehended layers of the folklore material adapted by Hovhannes Tumanyan, as well as high humanistic ideas, highlighting the key messages contained in them.

The study has been conducted with the use of analytical, comparative, literary, psychological and philosophical methods.

Keywords: *Hovhannes Tumanyan, “Hazaran Blbul”, national and universal values, aesthetic ideal, dedicated and self-sacrificing hero, philosophical-aesthetic view of human perfection*